# 20. Ա̆ՀՄԱԴԵ ԼԱՎԱՆԻ

Ժամանակով մարթմը կէլնի, շա՛տ հարուստի տըլա կէլնի: Խեր, մեր կմեռնեն, էլ մարթ չկա, որ ինոր շախի:

Մեկ օր կէրթա ըստի տաշտի մեջ, կմտածի վեր ուր հա՛լին, կասի. «Ապա ի՞նչխ շախվեմ ես»: Կասի. «Ես պիտի էլնեմ էրթամ ընկուն մարթու մոտ մշակ էլնեմ, որ իսկի մարթուց չի վա՛խենա»:

Էնտեղեն կէլնի ճամբախ կպյռնի, կէրթա: Շատ կէրթա, քիչ կէրթա, մե խա խալիվորըմ ռաստ կուգյա:

Կա՛սի. - Ջահել տղա, որտե՞ղ կէրթաս:

Կասի. - Պա՛պիկ, վալա, կէրթա՛մ զիկ ապրուստ կնդնելու: Իսկի ծեր ջուանի մեջ, թե թակավոր, թե խոջա՛ մարթ կա՞, որ իսկի մարթուց չի վախենա: Ես պիտի ընկուն մարթու մոտ մշակ էլնեմ:

Կասի. - Խա՛, մեր քյաղքյի աղեն՝ $հմադե Լավան, իսկի մարթուց չի վա՛խենա:

- Ո՞րտեղ կմնա, - կասի:

Շանց կուտա տուռ: Էն էլ կէլնի կէրթա՛ վեր ինոր տռան: Տուռ կտփի: Մշակներ կուգյա՛ն տուռ կպա՛նան:

Կասեն. - Ի՞նչ կուզես:

Կասի. - Կուզեմ էլնել էստեղ մշակ:

Կասեն. - Հա՛յդե, մենքյ զաթի քյառսուն խատ ենքյ: Էլ հ'ավելի պեթկ չի կա:

Տուռ կշինեն վերեն, կմնա վեր տռան չում իրիկուն. աղեն ավ անելուց կտա՛ռնա: Ձատամանց խե կտիսնա, կվա՛զի ծիյու զմբյուլ կպռնի, կքյաշի վիր տռան, ծիյուց կիճուցի տակ: Էն էլ ախքյըտի տեղ տնելով, կխանի մեկ մաջիտիաւ փարա կուտա ինոր:

Էն էլ կտփի զյետին, չառնե:

Կասի. - Ապա ի՞նչ կուզես:

Կասի. - Ես կուզեմ զիկ անես քյո փան մշակ:

- Շատ աղեկ, - կասի, - քյառսուն խա կա, դյու էլ էլի քյառսուն մեյ խապ:

Կփանի ներս, կուփա ուր վերակայուին, կասի. - Տար մեջ մշակներայ:

- Աղեկ:

Իրիկուն կփանի մեջ մշակներայ, կքյնեն: Էն էլ ինոր շանց կուփա:

Կասի. - Կուն էնա փեղ կթա̈փեն, փա̈յեն էնա փեղ կթափեն, ծիյանքյ ընկնա̈ կթիմրեն:

- Շատ աղեկ, - կասի:

Կպառկեն, կքյընեն: Կէլնի վեր, կես կիշրին, ծիյանքյ կթիմրի, գյա̈րին կլցնի, փա̈յեն կթալի, քյառսուն մշակու պւսն էլ կխոզյա, կուգյա̈ պառկի, խանգյիսփ կքյընի:

Առափուն մշակներ կակխեն:

- Վա՜խ, - կասեն, - անգյան ակխանքյ մկա մեր աղեն գյա̈, ի՚նչ կասի մե:

Կէլնին, կիրիշկան, որ փա̈յեն յանուկ, կուն թալուկ, ա̈րթ լցուկ, գյա̈րին վերեն ծիյանքյ խանգյիսփ կուփեն:

- Էսա վո՞վ արե, վո՞վ չարե, - թա̈զա̈ մշայն ի արե:

Անուն կփնեն Թա̈զա̈ մշակ, ինոր:

Էփա վերա̈կայուն իմեն օր իսոր արածներ կփիսանա. էն մեկ օր կէրթա̈ աղին կասի:

Կասի. - Մեր թազա մշակ մեր քյառսունի պա̈ն կանի, էլ ինչի՞ քյառսունի հա̈ղ կուփաս, - կասի, - պիփի մեր քյառսուն մշայն խանենքյ, քյառսունի հա̈ղն էլ փանքյ ինոր:

Կասի. - Տյու կիփես, վերա̈կայուն փյու ես:

Էփա մշակու խեփն էլ խոսիր են. քյառսուն օր քյո արած պիփի փիսնանքյ, նոր քյե հա̈ղ փանքյ:

Քյառսուն օր կթմըմի, Թազա մշակ կէլնի վերակայուին կասի. - Իմ հա̈ղ փու՛, էլ ես լռռ չեմ պանե, իմ քյառսուն օր թըմըմավ:

Կէլնի վերա̈կայուն, կպիրի քյառսուն մշայ կխանի, քյառսունի հա̈ղն էլ կուփա ինոր:

Ժամանայմ կընցնի: Մեկ օր էնա զոռքա կույի կողով քյամակ, իլին կու, կառնի կէրթա, որ թալի: Տիանա մարթմ' էնղիեն կվարգի կուգյա, խանքյակփոր:

Կասի. - Ջանըմ, իսոր ի՞նչ ի էլե, ըննա̈ կայիմ կվարգի կուգյա:

Մոփոխասնա ինոր, կասի. - Ախպեր, ի՞նչ ի էլե քյե:

Կասի. - Ջանըմ, փյու քյու կույի կողվից խա̈բա̈ր էլի, քյե դավի չկա խեփ ընկուն պա̈ներայ:

- Չէ, - կասի, - յան զի պիտի ասես, յան չէ՝ էսա կողով կտփեմ մեչ գյըլխուտ, մնաս տեղ:

- Աղեկ, - կասի, - քյո կողով տի գյետին, ծանդր ի:

- Չէ, - կասի, - պիտի կայնեմ էն կողվի տակ, մինչե խասկնամ տյու էն ինչի՞ կվարզես:

Կասի ինոր. - Վալա, - կասի, - էսա մեկ ամիս ի մեր աղեն՝ Տիմադե Լավան կկովեր ֆլան բազրգյան բաշու խետ, էսօր մեր կովու մարթերայ ըսկի կըդե-կըդե չի թող, հմեն պրտեց, մենակ ես եմ փրթե, էրթամ աղին ասեմ:

Կողով ըսկուն սարփով կտփի գյետին, որ հման կտոր մեկ աշխար կէրթա:

Կասի. - Հա՛յ, քյո վիզ կտրի, ես ասի ըսկուն տեղըմ էրթամ մշակ էլնեմ, որ ըսկի մարթուց չվախենա, էսա չափսլ բազրգյան մ'ի իկե վերեն կռիվ, հմեն պրտե, կտըռտե: Էսա չանծ հմեն շա կվախենա:

Կէրթա̈ տուն, կնստի վեր փայենի տեզին, ծեռ կտնի իրիսին, կասի. - Աղեն աղեկ էլներ, ուր Շըլխ ծին, սմա Նազարեն տեր զիկ, ես էրթի սև պիրի վեր բազրգյանի կոտին:

Վերակայուն կլսի, որ տըսկնա կասի, կէրթա աղին կասի:

Կասի. - Աղա, մեր Թազա մշակ ըսկնա կասեր:

Կասի. - Մե հա կանչի գյա մո զիկ:

Կէրթա կասի. - Թազա մշակ, արի էրթանքյ աղեն քյե կանչի:

Կասի. - Էն ի՞նչ կասի: Ես չեմ իգյա:

Զոռով, քյաշելով կառնի կէրթա:

Կասի. - Քյո անուն, ի՞նչ ի, Թազա մշակ:

Կասի. - Իմ՝ Միամանդի Սլիփ:

Կասի. - Ես տըվի քյե Շըլխ ծին, սըմա Նազարին: Կընա՛, ի՛նչ կիտես, արա:

Կիշեր, կես կիշերին կէլնի, Շըլխ ծին կխեծնի, սըմա Նա̈զա̈րին կպռնի ծեռ, կկշի կէրթա̈ բա̈զըրգյա̈նբաշու էլի մեչ կկայնի:

Կիռըմ կուտա բազըրգյանբաշուն, էլ մե մեծ մեյ կողմ կցվռտվեն հախու: Կինի մեչքեր հըմեն կպրտի, քյառսուն շլա̈կ գյամ կժողվըռտի, կշլկի, ինչ կանդա̈ր ծի կա, կժողվի, ծիյանքյ կպիրի խճի աղի պա̈կ, շլա̈կով, գյա̈մերն էլ կտանի տնի աղի էօդի տռան վերեն: Շըլխ ծին կկապի ուր տեղ, տավարն էլ կխոգյա̈, ոտքեր պռպիկ կպառկի վեր փա̈յնի տեզին, կքյընի: Ծիյանքյ հըռհըռոց, նըռնըռոց կտնեն պակի մեչ, աղի կնիյ կակխի:

Կասի. - Տնավեր, բա̈զրգյանբաշին հմենին կըտրե, մարթ չի մնցե, մարթ ինչ մնայե՝ ես, տյու:

Կասի. - Տնավեր, մե խապ իլի տյուս, իրիշկա՛, մեր թա̈զա̈ մշակ ծուռ մ'ի, ավսւրա տուռ թողե պա̈ց, ծիյանքյ էլիր են տյուս:

Կանի որ գլուխ խանի տյուս, աչալուրթնե գլուխ կթփի տրան շիփանին:
Մարթն կէլնի կիրիշկա, կտիսնա, որ պակն իլին ծի, ահակի շլակ ըմ խուլար վեր ուր տռան:
Կասի. - Էսա վո՞վ արե:
Էն կասի. - Ես եմ արե:
Էն կասի. - Ես եմ արե:
Կասի. - Չէ, վով գյա էսա շլակ վերույի, էն ի արե:
Վով կուզյա ծեռ կուտա, տեղեն չկանա տնղայույե:
Կասի. - Կանչեքյ, Թազա մշակ թռ գյա:
Մարթ կճամբխեն, կանչեն, չի գյա:
Վերակայուն կէրթա, զոռով էլմ կպիրի:
Կասի. - Մե հատ էսա խուլրի շլակ վիրու:
Ծեռ կուտա, կվերույի թեթր: Կխասնի ճակատ կպաքյի:
Կասի. - Էսա էլ մշակութնի խարջ չի: Տարեքյ համամ, համամլամիշ արեքյ, ծեռքյըմ վազրական խալավ խագյույեքյ, թռ գյա նստի իմ կուշտ:
- Է՜, - կասի, - Սիամանդ, տյու ի՞նչ մարթու տղա ես: Քյու միթկն ի՞նչ ի, որ իկիր ես, ինզյիր ես էսա տեղրանքյ ֆռալ:
Կասի. - Վալա, են ֆլան թակավորի տղեն ի, խեր-մերս մեռան, ես մնայի եթիմ, անտեր: Էկա ինզյա էսա տեղ, ասի՝ մշակութեն անեմ, ապրեմ:
Կասի. - Կուզե՞ս փսայվես:
Կասի. - Կուզեմ փսայվեմ, թե որ իմ բաքաթին կնիյ կընդնեմ:
Դալալ կուտա աղեն ուր էլի մեջ կանչել, թե ամենախոջից չում նախրչին, ՝ ինոնց ախչկներայ խալավ խագյույեն, պիրեն խաս բախչեն, որ Սիամանդ ֆռա մեչկըներ, որ ուր բարաթին կնիյ կընդնի:
Վերակայուրի ախչիյ կասի. «Ես նա կէրթամ, նա ըսկի: Չաթի քյաղքյի մեջ չանձ զի խորոտ չըկա: Ես կնստեմ փենջարեն, բանդըմ խաղ կասեմ ինոր: Կուզի՝ թող առնի, կուզի՝ ըսկի էլ թող չառնի»:
Ախչկներ կէլնեն կզարդրվեն, աչկներ կտեղեն, թաթ կպռնեն ծեռքյներ, կուզյան խաս բախչեն:
Աղեն կասի. - Դե Սիամանդ, էլի կնա խաս բախչեն, որ քյո բաքաթին ախչիյ կընդնես:
Կէլնի կէրթա, կտիսնա ախչիկ նստե փենջարեն, խաղ կասի ինոր մեյ բանդ, թե. «Ախչկներայ մեչ հմենի խորոտ ես եմ, տյու դո՞ր կէրթաս, վո՞վ պիտի կընդնես զիզնից ավելի»:
Էն էլ կիրիշկա վեր, կասի. - Որ հմենի խորոտ տյու ես, ես էլ նա կէրթամ, նա կֆռամ, նա՝ դյու էլ իմ բաքաթին ես»:
Կտառնա կէրթա էլմ աղի մոտ:

Կասի. - Կընդա՞ր քյո բաքաթին կնիկ:
Կասի. - Չէ, քյո էլի մեջ իմ բաքաթին կնիյ չկեր:
Կասի. - Տյու փվիք ես, մի՛ խնայե Շըխ ծին, սըմա Նազարին, ես էրթամ աշխար ֆռամ, իմ բաքաթին կնիյ կընդնեմ:
Կասի. - Տվիր եմ, չեմ խնայե, ամա քյո խարսնիս բիլա ծի չանես, քյո կալան ինչ կանդար կէլնի, ես պիտի փամ:
- Շատ աղեկ, - կասի:
Շըխ ծին կխեծնի, ըըմ կպռնի ծեռ, կէրթա: Շատ կէրթա, քիչ կէրթա, մե խատ անվերվերի սարի մը մեչ կկայնի: Ռըմ կզանի գյետին, կթիյինի վերեն, կմտածի. ո՞րդեխ էրթամ, ո՞րդեխ չէրթամ:
Կտիսնա, ուր կուշտ ախպյուրըմ կա: Կայնի վեր էտա ախպրին, կէճնի տակ, խայց կոչտի, ճյուր կխմի, ծիյուն խոտ ու ճյուր կուտա, կպառկի, կքյընի: Շատ, քիչ կքյընի, կէլնի վեր, դեոլբին կտնի աչկերաց, կիրիշկա, կտիսնա մե խա պըստիկ վրանըմ կուգյա աչիչ տեմ:
- Վալա, - կասի, - ես կաստ կանեմ, կէրթամ խենքյ էսա ինչ սև պան ի:
Կէրթա, շա՛տ կկշի, քիչ կկշի, կխասնի վրանին: Կտիսնա չադըր մ'ի ջոչ, մե հա խորոտ ախչիկ նստեր ի, քյըրգախ կանի, իսկի մարթ էլ չըկա էնտեղ, մենակ ի:
«Ահա, - կասի, - ես իմ բաքաթին կնիյ կնդա: Ամա ի՞նչխ կիտնամ, թե ախչիկ ի, թե կնիկ ի»:
Ծիյուց կէճնի տակ, ծին կկապի չադրի տոտ, կէրթա ներս: Ախչի կկայնի, խուր կնստըըյուցի:
Կասի. - Մե հա թասով ճյուր տու խմեմ:
Ճյուր կառնի խմի, յավաշ մ'ուր մատնիյ՝ կթըլի մեչ:
Կասի. «Թե որ ախչիկ էլնի, իմ մատնիյ կփոխի, թե կնիկ էլնի, զաթի իմ մատնիյ կտառնա ետ»:
Ախչիյ կտիսնա մատնիկ թասի մեչ, կխավնի ջհելին, կառնի, ուր մատնիյ կթըլի տեղ:
Էն էլ կառնի, կպախի, կնստեն խաբար կուտան մեմեկու խետ:
Կասի. - Ախչի, քյե իսկի ի՞նչ կա, խերից, մերից:
Կասի. - Ես խեր, մեր չունեմ, մենակ յոթ ախպեր ունեմ, էն էլ կնացիր են Միրե Տրաքանցու լամկու խետ կկռվեն: Իկեր էր զիկ ուզող, ես չեմ առնե, ինոր խամար ինոր խետ կկռվեն: Խետ որ հաղթվան, պիտի գյա զիկ փախցուցի տանի:
Ախչիկ կասի. - Սիր Արաքանցու լամուկն էլ իմ խորոխպոր լաճն ի:
Ծեն չխանեն: Կմնա չում իրիկուն, ախպերներ կուգյան, տիսնան ծիմ' ուրենց չադրի առաճ կապուկ ի, չանծ սարըմ: Կվախենան:

Կասին. «Միրե Արաբանցին իկեր ի, մտե չաղըր, ծին էլ տռան առաճ կապիր ի»:

Ճոչ ախպեր կասի. - Ե՛ս կէրթամ:

Միչնեյն կասի. - Ե՛ս կէրթամ:

Պստիկ ախպեր կասի. - Չէ՛, ես կէրթամ, խո մենք հմեն չէ՞նք էրթա պրտվի: Ես կէրթամ, թե որ մեռա, տյուք վէյըտ իմ թեոլ կառնեք:

Կուգյա, կտիսնա, մարթըմ նստե չադրի տակ: Տիսնա ջահել մարթմ'ի. պնդրն կուտա, կնստի: Կէրթա շուտըմ իմաց կանի մեկել ախպերներաց, կասի. - Ընկնա ջահելմ' նըստիր ի մեր չադրի տակ, չեմ կիտե ի՞նչ բան ի:

Կէլնեն, յոթն էլ մեյտեղ, կուգյան: Պարև, աստծու պարին կանեն, կնստեն:

Ինոնց ադաթըմ կա, մսաֆրին չում յոթ օր չեն խարցուցի, տյու վո՞վ ես, ո՞րտեղից կուգյաս, դհ՞ր կէրթաս, կամ ի՞նչ քործ ունես:

Մսաֆըր ինոնց կասի. - Տյուք յոթ ախպեր եք, հաղն ի, որ օր մեկ մնաք ծեր քյուրհչ պախապան: Ես որ ծեր քյոր թալի իմ ծիյու թուրքյ' տանի, տյուք ի՞նչ արող իք:

Ինոնք էլ մեմեկու կասեն. - Աղորթ կասի, օր մեկս դեռով մնանք մոտ:

Էն մեկել օր կէլնեն, ճհչ ախպեր կթողնեն քյուրոչ մոտ, մսաֆրի խետ կէրթան սար ավ անելու:

Յոթ օր ընկնա կանեն, տյոր կուգյա Միամանդին, ինքյ պիտի ննա ախչկա մոտ:

Ախչկան կասի. - Ախչի՛կ, էսա յոթ օր ի իկիր եմ էստեղ, քյու ախպերներ նա կխարցուցեն, նա կփտռեն, ես քյե համար եմ կայնի, թե որ գի կառնես, ասա, թե որ չէ՝ ես իմ հալ կիտնամ:

- Խա, - կասի, - ես քյե կառնեմ, թե որ տյու իմ յոթ ախպերն էլ փսակես:

Էն էլ կասի. - Չէ, ես քյո յոթ ախպերն էլ չեմ փսակե, ամա յոթնի կալան էլ կուտամ: Կուզի՝ թո փսայվեն, կուզի՝ իսկի էլ թո չփսայվեն:

Իրիկուն ախպերներ կուգյան տուն: Կէլնի կասի. - Ծեր մսաֆըր էսա յոթ օր ի իկեր ի, մեր ադաթ թըմըմավ, խարցուցեք, հեմ ի՞նչ ապով ի իկե:

Ինոնք էլ կխարցուցեն. - Ի՞նչ ապհվ ես իկե:

Կասի. - Վալա, իկիր եմ ծեր քյուրոչ խամար, ծեր քյոր պիտի տաք զիկ:

- Շատ աղեկ, - կասեն, - մենք մեր քյուրոչ պիտի խստցուցենք, վիր որ առնի, ինոր կուտանք:

Կխարցուցեն. - Ախչիկ, տյու իսա մարթ կառնե՞ս:

- Խա, - կասի, - ես իտրիկ ավելի մարթ չեմ կանա առնե:

- Է՜, կալան ի՞նչ ի, ի՞նչ ի:

- Ծեր յոթ ախպոր կալան տամ, կնայեքյ, փսայվեքյ:

- Շատ աղեկ, - կասեն:

Առատուն Սիամանդ կէլնի, Շըխ ծին կխեծնի, սըմա Նազարին կպռնի ծառ, կաստ կանի Ահմադե Լավանի տուն, կուզյա, որ կալան տանի, ախչիյն առնի:

Կուզյա ճամբախ, շա կուզյա, քիչ կուզյա, ախպրիմ' վերեն, կէճնի տակ: Կտիսնա զատու էնղեհեն բազրգյա'մ կուզյա: Քյասուն ծի խետ մալ-թամալ: Էրկու ճյուրապետ ոսկի:

Կասի. «Թայ լա էսա բազրգյան առճվա էրկու փեշանգյ տեր զիկ, ես տանի տի Խաչանզարեի կալան, առնի էլմ'էլ տանի Ահմադե Լավանի մոտ, խարսնիս անի: Վախենամ չիտա, կովենքյ, ես էլ ինոր ըսպանեմ»:

Բազրգյան կուզյա ախպրիկ մեկ արտաբոյ զատ, բեռներ կթափի: Գյուղյում կուտա մշակու ծեռ, կճամբխի ախպյուր ճրյու:

Սիամանդ կասի. - Չէ, պիտի չլյես էսա տեղեն ճյուր: Կնա քյո աղին ասա, թող էնա առճըվի էրկու փեշանգյ տա զիկ, թե չէ՝ ինոր կսպանեմ:

Կէրթա աղին կասի: Աղեն էլ կասի. կաղեն ու զյա: Քսան խա ոսկի կկապի ալըխի ճոթ: Կասի. - Տար տուր ինոր, գյուղյում ճյուր լիկ, պե խմենքյ, ընկնենքյ էրթանքյ:

Կառնի կէրթա, ալըխի ճոթ կքյակի, փարեն կուտա Սիամանդուն: Սիամանդ կպռնի, կյվըրվի, հմեն մեկ աշխարքըմ կթռնի:

- Ես ախքյա՞տ եմ, - կասի, - էնա պիրիր, տվիր զիկ, կնա ասա էրկու ճյորապետ տա:

Շալափեմ' կզանի մշակու իրես, վիզ կքյեթրի:

Կէրթա բազրգյանին կասի. - Տիսնա՞ս, ըսկուն շալափեմ' իզար իմ իրես՝ իմ վիզ քյեթըրվավ, ոսկին էլ յվըրեց, ըմեն մեկ աշխարքըմ կնաց:

Կասի. - Ապա ի՞նչ կուզի:

Կասի. - Էրկու ճյորապետ կուզի:

Կասի. - Դե էլեքյ պառնանքյ էրթանքյ, վո՞վ կիտի ինչ գյիհ, մարթասպան մարթ ի:

Կէլնի, կպառնա, որ էրթա, էսիկ ես ղիհեն կըռռա. - Դո՞ր կէրթաս, - կասի, - էսօր իմ կռիվն ի, քյոն:

Էն ինոր պանի տեղ չի տնե:

Սիամանդ կինի իտև, սըմա Նազարին կզանի, պուճուճկիկ՝ պերնիկ կուտա․տյուս, կինի կմեռնի:

Էն քյասուն պետ մալ կուտա էն քյասուն մշակուն, էն էրկու

ճյորապետ ոսկին կուտա ուր առաճ, կկշի, որ տանի Խաչազարի կալան:

Շատ կէրթա, քիչ կէրթա, տիսնա խալիվորըմ կուգյա էն դեհեն:

Կխարցուցի, կասի. - Է՜յ խալիվոր, Սիր Արաբանցուց, Խաչազարեից ի՞նչ լուր ունես:

- Վալա, - կասի, - Սիր Արարանցին էկավ, Խաչազարիի վեց ախպերն էլ սպանեց, քյորն էլ տարավ, մեյն էլ վիրավոր, չաղրի տակ կնվա:

- Հա՜յ, - կասի, - քյո վիզ կոտրի:

Շալափեմ' կզանի իրիսին:

- Հալա խալիվոր, - կասի, - կայնի քյե պան ասեմ:

Էրկու ճյորապետ ոսկի կքյակի մեկ այբա ոսկի կլցի ուր ծիու թարքյ, մնացած էրկու պետ կուտա խալիվուրուն:

Կասի. - Մտա քյո մեղաց տակ, քյե շալափե մ' էլ զարկի, առ էնա ոսկին քյե:

Կասի. - Սիամանդ, թայլա տյու մեկ շալափա էլ էնա իրիսին էր զարկե:

Էն կթռնի դա, ուր ծին կքշի, կէրթա: Կէրթա չաղրի տեմ, ծիյուց կէճնի տակ: Տիսնա աղորթ, պստիկ ախպեր յարալու չաղրի տայն ի, քյորն էլ դա չի:

Կէրթա մե հա պառվու տուան վերեն կկայնի: Կասի. - Պառավ, էսա մեկ գիշերվան զի տեղ կուտա՞ս:

Կասի. - Չէ, զի տեղ չկա:

- Պառավ, առա քյե ճանկյըմ ոսկի, զի մեյ կիշերվան տեղ տու:

Պառավ կուրախնա, ոսկին կառնի, ծին կքյաշի ներս, խուր կնստցուցի:

Պառավն էլ իրեքյ լաճ ունի, իրեքյ լաճ էլ Սիր Արաբանցու ասքյար են:

Սիամանդ կասի. - Պառա՛վ, կնա աշչիխանից մեյ կտոր կերակուր պե ուտեմ:

Կառնի ոսկիքյ, կվարզի աշչիխանեն, կերակուր կպիրի: Սիամանդ կնստի ուտելու. պառվու իրեքյ լաճն էլ կուգյան:

- Իկե՛քյ, իկեքյ, - կասի պառավ, - մսաֆրի խետ տյուք էլ խաց կիրեքյ: Ստված մե էսօր մաքյին ճամբխե, գյառ խետ:

Կմտնեն ներս, պարև, աստծու պարին կանեն:

Սիամանդ կասի. - Ծեր քործն ի՞նչ ի, տյուք ի՞նչ ի կանեքյ:

Կասի. - Վալա, մենքյ Սիր Արարանցու ասքյար ենքյ: Սիր Արարանցին ուր խորոխրոր ախչիկ՝ Խաջազարեն փախցուց, իպե:

Վեյ ախպեր սպանեյ: Տարե տրե քյառսուն տոնով ներս, փարդի իտև, էն էլ կաղախն իլին զեհիր պռնե ծեռ, կասի. «Խետ մոտխասնաս զի, կխմեմ մեռնեմ»:

Սհ̆աթմ' էրկու կնստեն, կթոնեն, կէրթան:

Սիամանդ կկանչի պառվուն, - Պառավ, - կասի, - տյու սըռիս ի՞նչխ ես:

Կասի. - Ուզածիտ պես կայիմ եմ:

Կասի. - Կնա̈ շուկեն, մեկ ալնախ խնձ̈իր պե:

Կէրթա̈, կպիրի:

Կասի. - Պառավ, տյու կանա՞ս խասնես չում Խա̈ջա̈զա̈րեի մոտ:

Կասի. - Տնավեր, խետ ինոր փարդեն իրա̈ր տամ, կասի. «Զեհիր կխմեմ, մեռնեմ»: Ես ի՞նչխ կանամ էրթամ մոտ են:

Կասի. - Պառավ, որ էրթա̈ս գյա̈ս, էսա այբի ոսկին կուտամ քյե:

- Աղեկ, - կասի, - Տյու քյընի չում լյուսնա, ես ճարըմ կանեմ:

Առատուն կէլնի, կասի, - Դե ասա, քյո ասածն ի՞նչ ի, ես էրթամ Խա̈ջա̈զա̈րին ասեմ:

Կէլնի մե խա խնձ̈իր կճղի, էն մատնիկ որ Խա̈ջա̈զա̈րեի խետ փոխեր ի, կտնի մեչ խնձ̈իրին, կափախ կկռոծի վերեն, կտնի մեջ մեկ ալնախ խնձ̈իրին:

Կասի. - Պառա՛վ, էսա ալնախ առ տար, էն գյախ որ կմոթխասնաս Խա̈ջա̈զա̈րեին, կասի. «Սի գյա̈, զեհիր կխմեմ», տյու էսա դիհեն բոռա. «Խաջազարե, էն քյասար ինչ մեչ քյո սոտին ի, զատ ի մոթխըսյե, տյու թողնես ես մեյ փա̈րդա̈ առա̈ճ գյամ»: Խետ որ կխասնես մոտ, ալնխի մեյ ճոթ պոնի, խնձորներ ըմեն էօլյոխնի թո էրթա̈ մոտ էն: Տյու տա̈րյի, ետ արե:

Պառավ կէլնի խայ իլին ժա̈ժիկ կանի, պռնի ուր ծեռ, կոծելեն կէրթա̈: Կէրթա կխասնի տոտ, պախապանիյտեր չեն թողնե մտնի ներս: Ոսկիմ' կուտա էն պախապանին, ոսկիմ' կուտա էնա պախապանին, կէրթա̈ կխասնի մոտ Խաջազարեի փա̈րդեն:

Կբոռա, կասի. - Խա̈ջա̈զա̈րե, էն քյա̈սա̈ր ինչ մեչ քյո սուրին ի, զարն ի մոտայե, տյու թողնես, ես մեյ փա̈րդա ա̈ռա̈ճա̈նամ:

Կասի. - Տյու կուրբան էլնես էտ խա̈բրին: Փարդեմ ա̈ռա̈ճա̈յի ու ա̈վելի չիգյաս, քյո քիթ կկտրեմ:

Պառավ մեյ հա կթոնի, կէրթա̈ կխասնի մուր, խնձորի ալնախ կպռնի, կէօլյոխնի կէրթա:

Խետ որ խնձորներ կինեն գյետին, տապկած խնձ̈իր կպա̈յվի: Մատնիկ կթռնի տյուս:

Խա̈ջեն խետ կտիսնա մատնիկ. - Պառավ արի, մ'էրթա, - կասի, - պառավ արի: Էսա մատընկի տեր դհ̆՞ր ի:

Կասի. - Մո զիկ ի, իմ տուն ի:

Կասի. - Կնա ինոր ասա, պարսի կնա, ափսոս ի քյո ջահելութեն: Միրե Արաբանցին զիկ իպե, ահազին ապքյար ունի: Կինի քյու իտևեն, քյե կսպանի, խեղճ ես պյու, ես էլ զաթի զեհիր կխմեմ, կմեռնեմ, էլ քյո իտև իրիկ չեմ անե:

Պառավ կպառնա կուգյա, Սիամանդին կպատմի:

Կասի. - Պառավ, էսա չելավ: Մեկ էլ կնա, Խաջաձզարեին ասա, թող խաբար ճամբխի Միր Արաբանցուն, ասի. «Վաղն էլի մեյդան պուր, ես թամաշա անեմ, որ հաջող էկար պուս, իմ փսայվելու մահր կուտամ: Ես էնտեղ կուգյամ, կկովեմ խեպ ինոր, ինոր չհաղթեմ, պյու ասա, հաղթվար, ես կաբյուլ չեմ անե:

Պառավ կէլնի առապուն կէրթա մո Խաջաձզարեն: Կասի. - Խաջաձզարե, Սիամանդ ըսկնա կասի: Կասի. «Թե որ ըպըսկնա կանա զի պանի, ես իրիկուն Միր Արաբանցուն կասեմ»:

Իրիկուն մարթ կճամբխի Միր Արաբանցուն, կասի. - Վաղ պիտի էլնես մեյդան, խաղաս, իմ սիրտ պայվի, քյե խավնեմ, էն մեկել օր առնեմ:

Էն էլ կասի. - Աղեկ:

Ուր մեծամեծ մարթեր հմեն կիավաքի, առապուն կէլնի մեյդան: Ծիյանքյ կխեծնեն, լծրեն: Միր Արաբանցին մեյդան կառնի, Խաջազարեն էլ փենջարեն ըէպտե, թամաշա կանի:

Մեկ էլ կփիսնան էն դիեն մարթ ըմ խեծե էշ, իտև առաճ, կքյեթրվի վեր էն կողին, կքյեթրվի վեր էն կողին: Կծծղան վերեն, կթռնի կէրթա:

Կէրթա Շըխ ծին կխեծնի, ըմա զարին կպռնի ծեռ, կուգյա մեյդան: Կզանի Միր Արաբանցուն ծիյուց կպիրի պակ: Կէլնի թյոզ, մոխրոտ արուն կուգյա քյիթ-պերնեն, կէլնի էլմ վեր ծիյուն, կկշի: Իրիկուն կքյայվի մեյդան, խաբար կճամբխի Խաջաձզարեն, կասի. - Էն վո՞վ էր էկավ իզար, քյե ծիյուց իպեր պակ, չէ՞ պյու կասիր շատ քաչ ես, որ ըպըսկնա յի, էլ մահր չեմ իպա:

Կասի. - Աղեկ, թո էն ըսկուն ճիչ-ճոչ խաբար չի պա, էն իմ իգյիթ մշակն էր, ինոր ծին պեպավ իմ ծիու սուրին, ես ինգյա պակ:

Սիամանդ կասի. - Պառավ, էսօր էլ կնա մո Խաջեզարեն, ասա. «Խաբար ճամբխի Արաբանցուն, ասա. վան դալալ պու կանչել, ինչ կանդար ախքյապ, խոջա մարթ կա, կանչի խարսնիս, նաղարեքյ զար, զուռնեքյ փչել պու, փսայվի, զիկ առ»:

Պառավ կէրթա Խաջաձզարեին կասի. Խաջաձզարեն կվախենա, կասի.

- Ապա որ չկարսյավ զիկ պաներ, ի՞նչխ անեմ: Աղեկ, պառավ, պյու կնա:

Իրիկուն մարթ կճամբխի մոտ Արաբանցին, կասի. - Վան ինչ

կանդաք մարթ կա գյո քյաղաքյ ժողվի, նաղարեքյ զարկ, զուռնեքյ փչի, ես կուզյամ փսակ:

Միր Արաբանցին գիշեր չում լուս չքյնի ուրախութնե: Առավուն կելնի ինչ կանդաք մարթ կա, կժողվի, քյասուսն խափ նաղարա, քյասուսն խափ զուռնա, բիրդան խարսնիս կըսկսի, Խաչաչարեն կպիրի, խարսի խալվներ կխագյուցեն, կպիրեն մեյդան, կնսփեցուցեն:

Դալալ կուտա կանչել, որ իսկի կնիյ, տղա, մարթ չմնա ներս, ըմեն գյան խարսնիս:

Կասեն. - Պառվու տուն մարթըմ կա, կանենքյ, չինքյ անե, չի գյա խարսնիս:

- Կնսցեքյ, զոռով քյաշեքյ պիրեքյ:

Կէրթան զոռով կքյաշեն, կառնեն կպիրեն, կուգյա խեղճ-խեղճ կնսփի էնտեղ:

Էն գյախ որ խարսնիս գյառն կելնի, կէրթա Շըխ ծին կխեծնի, կուգյա խարսնըսի իփվանց, կխասնի Խաչաչարեն կթալի ուր թարքյ, կառնի կէրթա: Քիչ մը կզապտանա, նալաթ չի գյա, կասի. «Իմնան, ասեն Սիամանդ գյաղտիկ էկավ Խաչաչարեն առեց, կնաց»:

Խաչաչարեն կառնի, կուգյա: Խինգյ ոսկի կտնի նաղարաչու ծեռաց մեչ: Կասի. - Բոռա, ասա՛, շաբաշ, սարջար շաբաշ, Սիամանդը Սլիվին Խաչաչարեն խարսնիսի միչեն առեց կնաց:

Ձին կլարի, կէրթա: Նաղարչին կբոռա, Միր Արաբանցին կլսի, կուգյա շալափե մ' կտփի մեչ նաղարաչու իրեսին, կասի. - Էտա ի՞նչ ի, կասես:

Կասի. - Տնավեր, ինչի՞ զի կզանես, տյու քյեռ՞ն ես, գյեռ տես, առեց կնաց:

Կիշկա, տիսնա, որ աղոըթ՝ թալե ուր թարքյ, առե կէրթա աեւսքի մէլ զապտացե:

Կբոռա, կասի. - Դե ծիյավոր, դե ծիյավոր:

Ըսկում ծիյավոր կժողվի, ասըղ երկնուց խեսաբ կա, ինոնց չկա:

Կառնի, կինի իտև, մե հա Խաչաչարեն կիրիշկա իտև, կտիսնա, որ ի՞նչ. աեւսքի զորքեր ինգյիր են իտև կուգյան:

Կասի. - Աստված քյու տուն ավրի, իշկա՛ իտև խենքյ, իրիշկա իփվանց տե՛ս ինչ կանդաք ասքյար կուգյա: Քյե պիտի սպանեն, զիկ էլմ էն շուն պիտի տանի:

Կասի. - Մառախ մ'անե:

Կէճույի տակ ծիյուց, կտնի էնտեղ, կելնի Շըխ ծիով կտառնա Միր Արաբանցու տեմ, կխասնի Արաբանցու մոտ, շատ կկռվեն, վերջապես կզանի, ինոր կսպանի:

Պառվու իրեքյ լաճն էլ որ կփիսնան Արաքանցին կզարկվի, սյան խասկնալով կասեն. «Քոշ տեղ չկովենք, ճարտվենք, էն որ ինոր չառեց, մե՞ պիտի առնի, քյելեքյ էրթանք խետ մե պանին»:

Մսքյար կտառյուցեն, կառնեն կուզյան:

Կուզյա Խաջազարեն կառնի ուր թարքյ, կէրթա Սիփանա սարի վերեն կնստի:

Կասի. - Խաջազարե, կեխտպայիր ենք, էսա տեղ մե լվայ անենք: Մխն էլավ, մախ վերցվավ: Քիչ մ'էլ խանգյստանանք, նոր էրթանք Ահմադե Լավանի տուն, խարսնիս անենք:

Կասի. - Դե նստի, քյո ծնկյ տի, ես իմ գյլեոխ տնեմ վերեն, քիչ մը քյնեմ:

Ծունգյ կտնի, Սիամանդոն գյլեխ կտնի վերեն, կքյընի, էն էլ կիրիշկա կտիսնա էրկու խապ վերի, մեկ կով, մեկ բուղա էնդիհեն կուզյան: Տիսնա էրկու-իրեքյ խապ էլ բուղա կուզյան, կինեն էտա կովու իտև: Էն մեյն զոռքա յի, կզանի ըմենին էլ կփախցուցի, կառնի կով, կայնի: Մե հա կծծղա ինքյ ուր: Տառնա խորոխպոր լաճ արունակից ի, կպիրի միտ, կուլա: Արտսունքյ տաքյ-տաքյ կկաթի վեր Սիամանդի իրիսին:

Կակխի Սիամանդ, կպսի. - Ընչի՞ կուլաս, չէլնի՞ զի չես ուզե: Որ քյո սիռտ թեխ քյո խորոխպոր լաճն էր, թող ասիր, ես քյե չի պիրե:

Խաջազարին կխաբի, կասի, - Չէ, ես իմ ախպերներ պիրի իմ միտ, ես էլ լայի:

Տառնա կպատմի վերի եզան արած:

Էն էլ կասի. - Ախտ էլնի վեր իմ խոզյուն, Խաջազարե, ես էրթամ էն եզան գյլեոխ պիրեմ քյե:

Կէրթա, շատ կէրթա, կտիսնա եզ կովուն տվե քյարի մ' առաճ, կայնե:

Նետվանեղ կքյաշի, զանի, եզան փորի մեչ, զոռքա եզ կկլորի զյետին:

Կէրթա տանակ կքյաշի մեջքեն, որ վիզ կտրի, գյլեոխ առնի էրթա: Կկտրի չում կուզյա բողըողազ, մեկեն եզ ուր գյլեոխ իրար կուտա, ուժով կվերուցի Սիամանդին, կտփի զնարի մեչ: Կէրթա կինի վեր բալալուկի փշին Սիամանդ. քյամկից կմտնի, սոտից կուտա տյուս, էլ չի կանա իրար տեղնի:

Խաջազարին շատ կաչքի Սիամանդին, տիսնա որ չի գյա, կէլնի կինի իտև, կասի. «Էսա, դո՞ր կնաց, չէկավ»:

Կուզյա կտիսնա, որ եզ կիսամորթել էնտեղ:

- Վա՜խ, - կասի, - թե որ բալեմ իկե Սիամանդին, էսա եզնից ի:

Քիչմ'էլ կանաճանա, կտիսնա, խո՜ր տեղեմ' ըռվուըմ կուզյա: Կէլնի զնարի կիրիշկա յածր, կտիսնա Սիամանդ ինգյե, բալալուկ սոտից տվե տյուս:

Կասի. - Սիամա՛նդ, իմ ծամեր կփրեմ, անեմ չվան, կախեմ փակ, փյու պռնի, ես քյե քյա՛շեմ խանեմ վեր:

Կասի. - Չէ, էլ իմ էսփեղեն փյուս գյալ անկարելի յի: փյու կնա քյե խամար աշխար ֆռա, քյո ուզած մարթ կընղի, ա՛ռ: Քյե խալալ եմ արե:

Շափ խաղ կասեն, խեփ մեմեկու էրկուս: Խա՛ջա՛զա՛րեն ուր աչքեր կկապի ալնըխով, ուր կթա՛լի զնարից ցածր: Կէրթա՛ դալրի կինի վեր Սիամանդի սըռփին:

Սիամանդ կասի. - Օ՜ֆ, դա՛րդերս խովցավ:

Խոզյին կուփա:

Մկա իփռնց գերեզման էնփեղն ի, բալալուկի վուշ փընկյվե մեչ էրկու գյերեզման:

